Գիտություն

ԱՊՐԻԼ
№ 4
(305)
2017 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ ● Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ՄԵՆՔ ՀԻՇՈՒՄ ԵՆՔ ԵՎ ՊԱՀԱՆՋՈՒՄ

Ալիսիա ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Հարցազրույց Աստծո հետ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ

գալիս է հազա՞ր տարին մի անգամ

Մի՛ լռիր, Աստված,
դու չէի՞ր կարող մեղսակից լինել
արհավիրքներին աշխարհի, հոգու.
Եվ մեզ չե՞ս կարող,
չպիտի՛ լքես,-
Աստվա՞ծ ես եթե…

Ես ծնվել եմ, Տեր,
մի հայ արգանդից,
և, հետևաբա՛ր, դեռ աշխարհ
չեկա՞ծ,
ծանոթ եմ բոլո՞ր
արհավիրքներին ու նախճիրներին,
հատկապես նրա՛ն,
որին թույլ տվիր, որ… եղեռնանա,
ո՞վ գիտե, թե ի՞նչ
գերմարդկային ու գաղտնի օրենքի
խորհուրդո՛վ խորին…

Եվ հարց եմ տալիս,
Ի խորոց իմ այս հարցազրույցի,
և խոցվա՞ծ սրտի.-
Որտե՞ղ էիր դու,
տիեզերական քո ճամփորդության
ո՞ր հանգրվանում,
և այն ժամանակ ի՞նչ էիր անում,
երբ… ջարդո՞ւմ էին հայերին
այստեղ…

Որտե՞ղ էիր, Տեր,
տիեզերական,
ո՞ր անջրպետի, ո՞ր ոլորտներում,
երբ ամբո՞ղջ մի ազգ,
իր անզորության ոտնահետքե՛րն էր
դաջում եղեռնի անապատներում…

Որտե՞ղ էիր դու, Ամենակարո՛ղ,
երբ քո ստվերի ստվե՛րը անգամ
հերի՞ք էր, որ դու
նախահայրերիդ ասված մի բառո՛վ,
կամ մի նշանո՛վ,
կանխեի՞ր ոճիրն այդ հրեշային:

Քո դո՛ւռն ենք այսօր
Տե՛ր, բախում կրկի՛ն
և… պարտադրո՛ւմ,
որ դո՛ւ, քո գալիք Արարումներով
ներմուծես նաև Արդար Դա՛տը մեր,
մեր Երա՞զն անմեռ…

Անսա՛ կոչն այս, Տե՛ր,
քանզի այս խաչված ցեղն,
անտարակո՛ւյս,
ունի մի վսե՞մ Առաքելությո՛ւն-
ի շահ Մարդկության ու
Խաղաղության.-
որի Գալուստն ու Կատարումը, Տե՛ր,
քո անմահ շնչի՞ց…

Ա՛ռ մեր ուսերից
այս բե՛ռը ցավի,
մոռացնե՞լ տուր մեզ
քարավաննե՛րը սովի ու մահվան
դաջված քարտեզի՛ն ու մեր…
ուղեղո՛ւմ…

Սպիտա՞կ է քո պատմուճանը, Տե՛ր,
ծածկի՞ր նրանով ժողովո՛ւրդը քո,
որ արտասուքը
իր ճանապարհը գեթ մի օր շեղի՛,
և վիշտն էլ երբեք
իր կնիքը մեր սրտին չդնի՛…

Պաշտպանի՞ր Դատը
մեր սուրբ ու արդար,
որ քո՛նն է նաև-
ինչպես Մեծ Վի՞շտը Տիեզերական…

Ամե՞ն, ամե՞ն եմ ասում քեզ, Հզո՛ր,
զի գուցե այդպե՛ս,
այդ ձևո՛վ միայն,
այս Հողագնդի չնչի՞ն մի մասում,
որտեղ իջել է Միածի՛նը քո,
Արդարությունը ինքն իրեն գտնի,
վերըստի՞ն ծնվի և կամ
նորոգվի՛…

Արդ, ո՞ւր եք, չքնաղ խոստումներ խաչին
Եղբայրության զո՞ւր բարբառներ, ո՞ւր եք
Կրակ կը փսխե հողն ամենուրեք,
Գետերն արյունով, դիակով կ'ուռչին:
Ու կ'իյնա ան, որ կը ծնկե վախով,
Զի թուրն ավելի արդար է խաչեն,
Զի կյանքն անոնց է միայն, որ քաջ են,
Անոնց, որ կապրին ուրիշի մահով:



Pic. 9. This picture is from a Gospel published in London in 1634, in which Armenia is presented as the birthplace of all mankind.

1634 թվականին Մեծ Բրիտանիայի մայրաքաղաք Լոնդոնում հրատարակված Ավետարանում տպագրված է երկիր մոլորակի մարդկության տոհմածառը ներկայացնող այս պատկերը: Ուշադիր նայելու պարագայում մենք տեսնում ենք, որ մարդկության ծննդավայրը, օրրանը Արմենիան է՝ Հայաստանը: Այս հանգամանքը փաստված է այս տոհմածառի մակագրության մեջ, անգլերենով՝ պետական լեզվով հզորագույն պետության, որն այն ժամանակներում գրեթե ողջ աշխարհի տիրակալն էր:

ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

Կյանքի 90-րդ տարում վախճանվեց վաստակաշատ պատմաբան, հայագիտության բնագավառի ճանաչված կազմակերպիչ, գիտության վաստակավոր գործիչ (2003), ակադեմիկոս Վլադիմիր Բախշիի Բարխուդարյանը:

Վլադիմիր Բարխուդարյանը ծնվել է 1927 թ. սեպտեմբերի 22-ին Վրաստանի Մառնեուլի շրջանի Աղբյորփի հայկական գյուղում, ծառայողի ընտանիքում: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ 1945 թ., նա ընդունվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ և այն հաջողությամբ ավարտում 1950 թ.: Նույն տարում ընդունվում է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրա: Ասպիրանտական ուսումնառության տարիներին ակադ. Ս. Տ. Երեմյանի ղեկավարությամբ մասնագիտացել է Հայաստանի միջնադարյան պատմության հարցերում: 1954 թ. հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական, 1968 թ.՝ դոկտորական ատենախոսությունները:

Վ. Բարխուդարյանը աշխատանքային առաջին մկրտությունը ստացել է Հայաստանի պատմության պետական թանգարանում՝ որպես կրտսեր գիտական աշխատող (1955-1958): 1958 թ. նա աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում՝ որպես կրտսեր (1958-1959), այնուհետև՝ ավագ (1963-1967) գիտաշխատող, գիտքարտուղար (1959-1963), փոխտնօրեն (1967-1990): 1990 թ. նա աշխատանքի է անցել ՀՀ ԳԱ նախագահությունում՝ որպես ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար (1990-2000), ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս-քարտուղար (2000-2005), ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար (2005-2006), ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար (2006-2011), ՀՀ ԳԱԱ պրեզիդենտի օգնական (2011-2017 թ.):

Վ. Բարխուդարյանի գիտական գործունեությունն ընթացել է հայկական գաղթավայրերի, պատմագիտության և հայ-ռուսական հարաբերությունների հիմնահարցերի մշակման ուղղությամբ: Նա առաջին մասնագետներից էր, որ, գիտակցելով գաղթավայրերի պատմության հետազոտության կարևորությունը, դարձավ այդ ուղղության համակարգված ու գիտական նորովի ուսումնասիրության սկզբնավորողներից մեկը: «Նոր-Նախիջևանի հայկական գաղութի պատմություն» (հ.1-2, Երևան, 1967, 1985) մենագրության մեջ աղբյուրագիտական հարուստ հենքով լուսաբանել է հայկական գաղութի տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային պատմությունը: Վ. Բարխուդարյանի ուսումնասիրությունն ակնառու է դարձնում հայկական գաղութի նշանակալի դերը հարավային Ռուսաստանի՝ Նովոռոսիայի գրեթե անմարդաբնակ տափաստանները յուրացնելու, առևտրատնտեսական կյանքը զարգացնելու գործում:

Վ. Բարխուդարյանի՝ պատմության ինստիտուտի «Հայ գաղթօջախների և Սփյուռքի պատմության» բաժնի ղեկավարության ներքո՝ ստեղծվեցին հայ գաղթավայրերի պատմությանը նվիրված մի շարք հոդվածների ժողովածուներ. «Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից», «Հայ ազատագրական շարժումները և հայկական գաղթավայրերը 16-18-րդ դարերում» (1985), «Էջեր հայ գաղթավայրերի պատմության» (1996):

Վ. Բարխուդարյանը լուրջ ներդրում է ունեցել անկախություն ձեռք բերելուց հետո դպրոցներում պատմության դասագրքերի ստեղծման գործում: Հասկանալի պատճառներով անհնար էր դարձել նախկին դասագրքերով հայոց պատմության դասավանդումը: Նրա խմբագրությամբ լույս տեսան հայ ժողովրդի ամբողջական պատմությունն ընդգրկող չորս դասագիրք:

Ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը երկար տարիներ եղել է ՀՀ ԳԱԱ պատմության, հնագիտության և ազգագրության ինստիտուտների, Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի, Բարձրագույն որակավորման հանձնաժողովի և այլ հաստատությունների գիտական խորհուրդների անդամ և գործուն մասնակցություն է ունեցել դրանց աշխատանքներին: Վ. Բարխուդարյանը առանձնակի ջերմությամբ ու եռանդով է մասնակցել Հայոց եկեղեցու հոգևոր ու գիտամշակութային կյանքին: Նա երկար տարիներ եղել է Բարձրագույն հոգևոր խորհրդի անդամ: Ակտիվ մասնակցություն է ունեցել Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատան կայացմանը:

Ակադեմիկոս Վ. Բարխուդարյանն ավելի քան չորս տասնամյակ՝ որպես Պատմության ինստիտուտի փոխտնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, փոխնախագահ, հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ծավալել է գիտական-կազմակերպական ակտիվ գործունեություն: Որպես վաստակի գնահատում նա արժանացել է բազմաթիվ պարգևների՝ ԽՍՀՄ Պատվո նշան, ՀՀ Սուրբ Մեսրոպ Մաշտոց, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ս. Սահակ-Ս. Մեսրոպ շքանշաններ, ՀՀ կրթության և գիտության նախարարության ոսկե մեդալ:

Վաստակաշատ գիտնական Վլադիմիր Բարխուդարյանի հիշատակը միշտ վառ կմնա մեր հիշողության մեջ:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳԱԱ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց Վահրամ Հակոբյանը

ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահրամ Հակոբյանը: Վահրամ Հակոբյանը ծնվել է 1954 թվականի հունվարի 10-ին: Գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետը: Դոկտորական ատենախոսությունը պաշտպանել է ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտում:

Վահրամ Հակոբյանի գիտական գործունեության ուղղություններն են՝

- առաձգականության տեսություն՝ կոնտակտային և խառը եզրային խնդիրներ,
- անհամասեռ ծերացող սողքի տեսություն՝ բարակապատ էլեմենտներից ուժի փոխանցումը մասիվ մարմիններին,
- քայքայման մեխանիկա՝ մասիվ մարմիններում միաժամանակ գործող լարումների տարբեր տիպի կուտակիչների փոխազդեցությունը:

Վահրամ Հակոբյանը 94 գիտական հոդվածների, երկու մենագրության և մեկ ուսումնական ձեռնարկի հեղինակ է:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրվեց ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը

ՀՀ ԳԱԱ նախագահությունը մարտի 22-ի նիստում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանին:

Ռուբեն Սաֆրաստյանը ծնվել է 1955 թ.-ին՝ Երևանում: 2014 թ.-ին նա ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Ռուբեն Սաֆրաստյանի հետազոտությունների բնագավառն ընդգրկում է Թուրքիայի նոր և նորագույն պատմությունը, Թուրքիայի արտաքին քաղաքականությունը, տարածաշրջանային խնդիրները, ցեղասպանագիտությունը: Նրա հիմնական գիտական արդյունքները վերաբերում են թուրքական գաղափարաքաղաքական հոսանքների ուսումնասիրմանը, ցեղասպանության տեսական հետազոտությանը:

Ռուբեն Սաֆրաստյանը 5 մենագրությունների, 111 հոդվածների հեղինակ է, որոնցից 9-ը հրապարակվել են արտասահմանյան հանդեսներում:

Ռուբեն Սաֆրաստյանը արժանացել է Մովսես Խորենացի, Գարեգին Նժդեհ մեդալների, ՀՀ Ազգային Ժողովի պատվոգրի:

Նա 14 թեկնածուական ատենախոսության ղեկավար է:

Ռուբեն Սաֆրաստյանը հաղթել է Հումբոլդտի անվան (Գերմանիա, 1999), Ֆուլբրայթի անվան (ԱՄՆ, 2001), Միջազգային քաղաքականության ուսումնասիրման (Հունգարիա, 2003) մրցույթներում: Նա «Asiatica: Труды по философии и культурам Востока:, «Россия и новые государства Евразии», «Sociology and Anthropology: International Peer-Reviewed Journal» միջազգային գիտական պարբերականների խմբագրական խորհուրդների անդամ է, հիմնադրել է «Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», «Ժամանակակից Եվրասիա» գիտական պարբերականները:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն

ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրվեց Վլադիմիր Սահակյանը

ՀՀ ԳԱԱ նախագահությունը մարտի 22-ի նիստում ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրեց Վլադիմիր Սահակյանին:

Վլադիմիր Սահակյանը ծնվել է 1952 թ.-ին, Ադրբեջանի Գյանջա քաղաքում:

Վլադիմիր Սահակյանի գիտական հետաքրքրվածության ոլորտն ընդգրկում է համակարգչային ցանցերի ճարտարապետությունը, բաշխված տվյալների բազաները, վիճակագրական մեթոդները, զանգվածային համակարգերը և հերթերի տեսությունը, զուգահեռ ծրագրավորումը:

Վլադիմիր Սահակյանը 2 ուսումնամեթոդական ձեռնարկի, 75 գիտական, գիտատեխնիկական և գիտամեթոդական հոդվածների հեղինակ է: Ղեկավարել է 11 թեկնածուական ատենախոսություն:

2004 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակի «Տեխնիկական գիտությունների և տեխնոլոգիաների բնագավառում»: 2013 թ.-ին ստացել է «Անանիա Շիրակացու» մեդալ:

Վլադիմիր Սահակյանի ղեկավարությամբ ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը մասնակցել է 20–ից ավելի միջազգային նախագծերի:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

Հ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում ընտրվեց Տիգրան Զաքարյանը

ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում ընտրվեց ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Տիգրան Զաքարյանը:

Տիգրան Զաքարյանը ծնվել է 1964 թ. հուլիսի 13-ին, Երևանում: Ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ռադիոտեխնիկայի ֆակուլտետը:

Տիգրան Զաքարյանն ավելի քան 30 գիտական աշխատությունների հեղինակ է: Նրա գիտական նախասիրություններն են՝ ֆիզիկական գիտափորձի ավտոմատացում և հեռակառավարում, ռադիոլոկացիոն համակարգեր և ազդանշանների թվային մշակում:

Մինչ տնօրենի պաշտոնում ընտրվելը Տիգրան Զաքարյանը եղել է ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի լաբորատորիայի ղեկավարը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՀՀ ԳԱԱ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժինը

Ռազմիկ ՄԻՐԶՈՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Ռազմիկ Միզոյանը ծնվել է 1957 թվականի սեպտեմբերի 21-ին Երևանում:

Տասնմեկամյա Ռազմիկը սիրում էր զբաղվել ընթերցանությամբ և մի անգամ ձեռքն ընկավ "Պատմություն ռադիոէլեկտրոնիկայի մասին" գիրքը, որն էլ կանխորոշեց նրա հետագա մասնագիտության ընտրությունը: Նա վստահաբար գիտեր, որ ֆիզիկոս է դառնալու:

Ռ.Միրզոյանը 1974թ. գերազանցությամբ ավարտելով Երևանի 26 կոմիսարների անվան դպրոցը, ընդունվում է Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետ: Շուտով համալսարանում լուր տարածվեց, որ Մոսկվայից ժամանել են անվանի գիտնականներ և հարցազրույց են անցկացնում Ֆիզիկայի ֆակուլտետի երիտասարդների հետ՝ լավագույններին ընտրելու և տեղափոխելու Մոսկվա՝ կրթությունը այնտեղ շարունակելու համար: Ֆիզիկայի ֆակուլտետից ընտրեցին երկուսին:

Մի քանի ամիս անց Մոսկվայի ինժիներաֆիզիկական ինստիտուտից Ռազմիկ Միրզոյանը նամակ է ստանում, որտեղ առաջարկվում էր կրթությունը շարունակել իրենց բուհի՝ Ֆիզիկայի հատուկ ֆակուլտետում: Ամեն տարի յուրաքանչյուր հանրապետությունից վերցնում էին 2 երիտասարդի, հավաքվում էր 30 ուսանող և նրանք սովորում էին Ֆիզիկայի հատուկ ֆակուլտետում, որտեղ ուսանողները ունենում էին բավական շատ արտոնություններ: 1981թ. գերազանցությամբ ավարտելով Մոսկվայի Ինժիներաֆիզիկական ինստիտուտը, Ռազմիկ Միրզոյանը նույն տարում ընդունվեց գիտությունների ակադեմիայի Պ. Ն. Լեբեդևի անվան ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրան: Նրա ասպիրանտական գործունեությունը միտված էր ուսումնասիրելու գերհզոր լազերներով ջերմամիջուկային ռեակցիաները:

1984 թվականին արդեն լինելով 26 գիտական հոդվածների հեղինակ և համահեղինակ, Ռազմիկ Միրզոյանը հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական ատենախոսությունը ակադեմիկոս Մ. Ա. Լեոնտովիչի գլխավորությամբ «Диагностика высокотемпературный лазерный плазмы» վերտառությամբ:

Արդեն ֆիզմաթ գիտությունների թեկնածու Ռ. Միրզոյանը վերադարձավ Հայաստան և աշխատանքի անցավ Երևանի Ֆիզիկայի ինստիտուտում, որպես կրտսեր գիտաշխատող: Տարիների ընթացքում Հայաստան վերադարձան այն երբեմնի լավագույն ուսանողները, որոնց յուրաքանչյուր տարի տարել էին Մոսկվա՝ կրթությունը շարունակելու ինժիներաֆիզիկական ինստիտուտում: Ստեղծվեց լուրջ գիտնականներից բաղկացած մի խումբ, որը սկսեց ռուսական արբանյակների համար պատրաստել դետեկտորներ և հա-

մագործակցել Ռուսաստանի տիեզերական հետազոտությունների ինստիտուտի հետ: Խմբի հիմնական մասը 1984թ. սկսեց աշխատել գամա աստղադիտակների ստեղծման ուղղությամբ:

Այս խմբի ջանքերով 1989 թ. ստեղծվեց առաջին աստղադիտակը: Օրագրվում էր ստեղծել ևս 5 աստղադիտակ: Այս խմբում իր ակտիվ դերակատարությունը ուներ ՀՀ ԳԱԱ արտասահմանյան մեկ այլ անդամ ևս՝ Ֆելիքս Ահարոնյանը: Սակայն սկսվեց Խորհրդային Միության փլուզումը, որը փաստացի ազդեց նաև գիտության զարգացման վրա:

1990թ. Ռազմիկ Միրզոյանը մասնակցեց Գերմանիայում տեղի ունեցած մի գիտաժողովի, որի ժամանակ առաջարկ ստացավ Կանարյան կղզիներում՝ Լա Պալմայում մասնակցել նոր դետեկտորի կառուցման աշխատանքներին: Առաջին համագործակցությունը սկսվեց Գերմանիայի Քիլ համալսարանի հետ, որը պետական մակարդակի համագործակցություն էր և պետք է տևեր 13 ամիս: Ի վերջո կառուցվեց աստղադիտակը (Ռազմիկ Միրզոյանը գաղափարի հեղինակն էր (know- how), այդ աստղադիտակը տեղադրվեց Կանարյան կղզիներում: Այս ընթացքում Միրզոյանը հրավեր է ստանում Մաքս Պլանկ համալսարանից՝ ինը ամիս աշխատելու իրենց մոտ:

Այսօր, արդեն Ռ. Միրզոյանը Մյունխենում և Իրկուտսկում լաբորատորիաների ղեկավար է: 2013թ. Միրզոյանի ղկավարած խումբը շահեց ՌԴ նախագահի հրամանով կազմակերպած «մեգագրանտը», որի արդյունքում Բայկալ լճի ափին կառուցվում է մեծ աստղադիտակ և այդ աշխատանքները իրականացնում են Իրկուտսկի լաբորատորիայի 74 գիտնականներ Միրզոյանի գլխավորությամբ:

Միրզոյանը նաև Գերմանիայի Մաքս Պլանկ համալսարանի հիմնական աշխատող է և լաբորատորիայի ղեկավար:

Նա նաև նոր՝ Cherenkov Telescope Array միջազգային ծրագրի ղեկավար է, որի շրջանակներում պատրաստվում են կառուցել 24 մետրանոց մոտ հարյուր աստղադիտակներ:

Ռ. Միրզոյանը այժմ բավական մեծ հետաքրքրություն է ցուցաբերում լուսազգայուն էլեմենտների նկատմամբ: Նա խիստ կարևորում է Ֆիզիկայի ինստիտուտի տիեզերական ճառագայթների խումբը, որը նրա գնահատմամբ շատ կարևոր աշխատանքներ է տանում՝ ուսումնասիրելով ամպրոպային ամպերը: Նա ամեն տարի գալիս է Հայաստան, որպեսզի մասնակցի այդ խմբի կազմակերպած գիտաժողովներին:

Այս տարիների ընթացքում Ռազմիկ Միրզոյանը ակտիվորեն համագործակցել է Երևանի Ֆիզիկայի ինստիտուտի հետ: Այժմ էլ նա ակտիվորեն համագործակցում է հատկապես Ֆիզիկայի ինստիտուտի (այժմ Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի) տնօրեն Ա. Չիլինգարյանի հետ:

Այսօր արդեն կայացած գիտնականը 7 արտոնագրի հեղինակ է: Նա 400 գիտական հոդվածի համահեղինակ է, որից 100-ի հեղինակն է, երկու մենագրություններում ունի պարագրաֆներ: Այս տարիների ընթացքում Միրզոյանի ղեկավարությամբ գիտությունների թեկնածու են դարձել 15-ից ավելի գիտնականներ, որոնց մեջ, ինչպես ցավով նշում է նա, ոչ մի հայ երիտասարդ չի եղել:

Հաշվի առնելով Ռազմիկ Միրզոյանի գիտական վաստակը, ինչպես նաև մայր հայրենիքի հետ սերտ կապերը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան 2014 թվականին նրան ընտրել է ԳԱԱ արտասահմանյան անդամ:

Ռազմիկ Միրզոյանը այսօր էլ մեծ ջանքեր է ներդնում աստղաֆիզիկայի ոլորտում նոր գիտական մշակումներ իրականացնելու գործում և սերտորեն համագործակցում է Հայաստանի գիտական շրջանակների համապատասխան մասնագետների հետ:

Գոհար ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժնի գիտաշխատող,
պատմական գիտությունների թեկնածու,
դոցենտ

Ջրի համաշխարհային օրը ՀՀ ԳԱԱ-ում

Մարտի 22-ին ՀՀ ԳԱԱ-ում նշվեց Ջրի համաշխարհային օրը: ՀՀ ԳԱԱ երկրաբանական թանգարանն անցկացրեց «Ջրի համաշխարհային օրը մշակույթների խաչմերուկում, 2017 թ.» խորագրով միջոցառում:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանն իր ողջույնի խոսքում ասաց. «Մենք պետք է խնայողաբար վերաբերվենք Սևանա լճին և Հայաստանի այլ ջրային ռեսուրսներին: Պետք է ուշադիր լինել ջրի պահպանման, օգտագործման, շահագործման խնդիրների նկատմամբ: Այս ուղղությամբ մեր գիտական կազմակերպություններում իրականացվում են մի շարք հետազոտություններ»:

«Պատմականորեն Հայաստանի համար քաղցրահամ ջրերի շտեմարան եղել է և ապագայի համար առավել կարևորվում է Սևանա լիճը, որն իր դիրքով և ջրերի որակի տեսակետից մեր ժողովրդի գոյատևման երաշխիքներից մեկն է: Հարկ է նշել, որ վերջին տարիներին հետևողական միջոցառումները, միտված Սևանի ջրի մակարդակի բարձրացմանը, տալիս են իրենց դրական արդյունքները»,- իր ելույթում մասնավորապես նշեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռուբեն Ջրբաշյանը:

«2000 թ.-ից սկսած Գերմանական զարգացման բանկը ներգրավվեց Հայաստանի ջրային ոլորտում՝ Հայաստանի կառավարության հետ միասին խթանելու ջրի որակի պահպանումը: Եթե այս ծրագիրը հաջողությամբ իրականացվի, Գյումրիի և Վանաձորի շուրջ 4000 բնակիչ բարձր որակի ջուր կունենա»,- խոստացավ Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Բերնհարդ Մաթիաս Քիսլերը:

Հայաստանում Իտալիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ջովաննի Ռիչուլլին նշեց, որ Իտալիայում ջրի խնդիրներից են ջրակորուստները և թունաքիմիկատներով և քիմիական նյութերով ջրի աղտոտումը: Այս խնդիրներին մեծ հնչեղություն տալու համար Իտալիայում ամեն տարի մեծ շուքով նշում են Ջրի համաշխարհային օրը:

ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանն իր ելույթում ներկայացրեց պետության կողմից ջրային ռեսուրսների կառավարման պետական քաղաքականության հիմնական սկզբունքները:

«Վերջին տարիներին Հայաստանի ջրային ռեսուրսների կառավարման բնագավառում իրականացվել են էական օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ, ինչի արդյունքում ապահովվել է դրանց համապարփակ կառավարման սկզբունքների ներդրումը և կիրառումը: Ջրային ռեսուրսների ոլորտում տարվում է միջազգային չափանիշներին համապատասխան քաղաքականություն: Այդ գործընթացները համահունչ են Եվրամիության համապատասխան դիրեկտիվներին, ինչը բարձրացնում է մեր կողմից իրականացվող գործողությունների արդյունավետությունը»,- նշեց Խաչիկ Հակոբյանը:

«Սևան» ազգային պարկի նախագծի հեղինակ Գագիկ Սուխուդյանն անդրադարձավ Սևանա լճի, նրա պատմական, ներկայիս և ապագա խնդիրներին:

Միջոցառումը շարունակվեց ՀՀ ԳԱԱ երկրաբանական թանգարանում, որտեղ թանգարանի տնօրեն Գայանե Գրիգորյանն անցկացրեց «Ջուրը կյանք է, չաղտոտենք այն...» թեմայով մրցույթ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

(Սկիզբը՝ № 2-ում)

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԼԻԻՐԱՎ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

1991 թ. սեպտեմբերի 21-ը շրջադարձային եղավ հայերի պատմության մեջ: Աշխարհի քաղաքական քարտեզի վրա հայտնվեց Հայաստանի Հանրապետությունը՝ որպես ազատ, անկախ և սուվերեն՝ ինքնիշխան, պետություն: Դա կապված էր Խորհրդային Միության փլուզման հետ, որի փլատակների վրա քաղաքական ասպարեզ իջան 15 անկախ պետություններ, այդ թվում և Հայաստանի Հանրապետությունը: Անկախ Հայաստանի առաջին պրեզիդենտ ընտրվեց Լևոն Տեր-Պետրոսյանը (1991-1998 թթ.), երկրորդ պրեզիդենտ՝ Ռոբերտ Քոչարյանը (1998-2008 թթ.), իսկ 2008 թ. ապրիլից մինչև օրս՝ այդ բարձր պաշտոնում Սերժ Սարգսյանն է:

Պատմական այդ շրջադարձային պահից անցել է ընդամենը քառորդ դար: Դա համարվում է անցումային շրջան, որի հիմնական խնդիրը Հայաստանի՝ որպես անկախ, արդիական ազգային պետության կայանալն է և միջազգային հանրության լիիրավ անդամ դառնալն ու նրանում իր արժանի տեղը գրավելը:

Պատմական տարբեր դարաշրջաններում վերոնշյալ առանցքային խնդիրները լուծվել են տարբեր ուղիներով: XX դարը և XXI դարի սկիզբը միջազգային կառույցների դարաշրջան է, ստեղծվել է այդ կառույցների խիտ ցանց, առանց որոնց անդամակցելու անհնար է արդի միջազգային հարաբերություններում միայնակ, մեկուսի պահպանել անկախություն և դառնալ միջազգային հանրության շատ թե քիչ ազդեցիկ անդամ: Այդ ցանցում առաջնայինը Միավորված ազգերի կազմակերպությունն է (ՄԱԿ), որին այսօր անդամակցում է աշխարհի 193 պետություն:

Հայաստանի Հանրապետությունը ՄԱԿ-ի անդամ դարձավ 1992 թ. մարտի 2-ին: ՄԱԿ-ին անդամակցելն առաջին և լուրջ քայլն էր Հայաստանի միջազգային հանրության անդամ դառնալու ճանապարհին: ՄԱԿ-ի անդամակցմանը հաջորդեց Հայաստանի միջազգային ճանաչման գործընթացը: Դրանում իր կարևոր դերը խաղաց Հայաստանի ճանաչումը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամների՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Չինաստանի, Ռուսաստանի և Ֆրանսիայի կողմից: Շուտով դրանց միացան այնպիսի ազդեցիկ երկրներ, ինչպես Գերմանիան, Իտալիան, Հնդկաստանը, Ճապոնիան, Իրանը, Կանադան և Եվրոպայի, Ասիայի ու Աֆրիկայի բազմաթիվ այլ պետություններ: Ճանաչմանը հաջորդեց դիվանագիտական հարաբերությունների հաստատումը Հայաստանի հետ: Այսօր, ՄԱԿ-ի անդամ 193 պետություններից Հայաստանի Հանրապետությունը դիվանագիտական հարաբերություններ ունի մոտ 160 պետության հետ, որը վկայում է Հայաստանի կարևորության և բարձր հեղինակության մասին: Եվ եթե դրան ավելացնենք, որ Հայաստանը դեսպանությունների մակարդակով դիվանագիտական ներկայացուցչություններ ունի աշխարհի մոտ 60 պետությունում, իսկ երեսունից ավելի պետություններ դեսպանություններ են բացել Երևանում, ապա պատկերն ավելի ամբողջական և տպավորիչ կդառնա: Առաջինը Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Լիտվան (21.11.1991 թ):

Քննարկվող հարցի տեսանկյունից կարևոր է անդրադառնալ նաև Հայաստանի հարաբերություններին իր անմիջական հարևանների՝ Թուրքիայի, Իրանի, Վրաստանի և Ադրբեջանի հետ: Վրաստանն առաջին երկիրն է աշխարհում, որ ճանաչել է Հայաստանի Հանրապետության անկախությունը՝ 1991 թ. հուլիսի 27-ին: Թուրքիան Հայաստանի անկախությունը ճանաչել է 1991թ. դեկտեմբերի 12-ին, Իրանը՝ 1991 թ. դեկտեմբերի 25ին, իսկ Ադրբեջանը՝ մինչև օրս չի ճանաչել: Իսկ ինչ վերաբերում է դիվանագիտական հարաբերություններին, ապա նման հարաբերություններ Հայաստանի հետ դեսպանությունների մակարդակով հաստատել են միայն Վրաստանը և Իրանը, իսկ Թուրքիան և Ադրբեջանը՝ ոչ: Դեռ ավելին, այս վերջին երկուսը փակել են իրենց սահմանները Հայաստանի հետ և նրան ենթարկել կոմունիկացիոն շրջափակման՝ Հայաստանին ներկայացնելով երկու նախապայման. առաջին, հրաժարվել հայոց ցեղասպանության ճանաչման պահանջից, և երկրորդ, ԼՂՀ-ն վերապես հայտարարեց ՀՀ ԱԳ նախարար է. Նալբանդյանը, «Հաջողությամբ ավարտվել են ԵՄ-Հայաստան նոր շրջանակային համաձայնագրի վերաբերյալ չորս փուլերը: Մենք հույս ունենք մոտ ապագայում ավարտել բանակցությունները»: Հայաստանի արտաքին գործերի նախարարության պաշտոնական տվյալների համաձայն Հայաստանը տարբեր երկրների հետ ստորագրել է 1744 պայմանագիր և հուշագիր:

Հայաստանը որպես պետություն առաջին օրվանից հայտարարել է եվրոպական արժեքներին իր հավատարմության մասին, որի տակ հասկացվում են այնպիսի արժեքներ, ինչպես ժողովրդավարություն, օրենքի գերակայություն, քաղաքացիական հասարակություն և մարդու իրավունքների հարգում:

Հայաստանի հեղինակության բարձրացմանը և միջազգային դիրքերի ամրապնդմանը նպաստեց նաև միջազգային հանրության կողմից Հայաստանն առաջին քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու ճանաչման փաստը, որի լը այդ ուղղությամբ առաջին քայլն էր, սակայն ոչ բավարար: Անվտանգությունը և հողը պաշտպանում են զենքով:

Հայաստանի անկախության հռչակումից ուղիղ չորս ամիս անց՝ 1992 թ. հունվարի 28-ին, ստեղծվեց Հայկական բանակը, որը շատ չանցած մեծ փորձության ենթարկվեց, երբ Ադրբեջանը պատերազմ սանձազերծեց իր անկախությունը հռչակած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ: Ոսոխը ծանր պարտություն կրեց, և 1994 թ. մայիսի 12-ին Հայաստանը, ԼՂՀ-ն և Ադրբեջանը ստորագրեցին հրադադարի պայմանագիր: Ադրբեջանի պարտությունը և Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միացյալ զորքերի փառահեղ հաղթանակը բարձրացրեց Հայաստանի հեղինակությունը հաչս միջազգային հանրության՝ որպես կարևոր տարածաշրջանային գործոն: Դա նաև դաս եղավ ադրբեջանական ագրեսորներին, որոնք ավելի քան քսան տարի չեն համարձակվում նոր ռազմական գործողությունների ընդդեմ հայության:

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՅԱՑԱԾ ԱՐԴԻԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ Է ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԼԻԻՐԱՎ ԱՆԴԱՄ

(Մտորումներ Հայաստանի անկախության 25-ամյակի առթիվ)

հիմնական խնդիրը Հայաստանի՝ որպես անկախ, արդիական ազգային պետության կայանալն է և միջազգային հանրության լիիրավ անդամ դառնալն ու նրանում իր արժանի տեղը գրավելը:

Պատմական տարբեր դարաշրջաններում վերոնշյալ առանցքային խնդիրները լուծվել են տարբեր ուղիներով: XX դարը և XXI դարի սկիզբը միջազգային կառույցների դարաշրջան է, ստեղծվել է այդ կառույցների խիտ ցանց, առանց որոնց անդամակցելու անհնար է արդի միջազգային հարաբերություններում միայնակ, մեկուսի պահպանել անկախություն և դառնալ միջազգային հանրության շատ թե քիչ ազդեցիկ անդամ: Այդ ցանցում առաջնայինը Միավորված ազգերի կազմակերպությունն է (ՄԱԿ), որին այսօր անդամակցում է աշխարհի 193 պետություն:

Հայաստանի Հանրապետությունը ՄԱԿ-ի անդամ դարձավ 1992 թ. մարտի 2-ին: ՄԱԿ-ին անդամակցելն առաջին և լուրջ քայլն էր Հայաստանի միջազգային հանրության անդամ դառնալու ճանապարհին: ՄԱԿ-ի անդամակցմանը հաջորդեց Հայաստանի միջազգային ճանաչման գործընթացը: Դրանում իր կարևոր դերը խաղաց Հայաստանի ճանաչումը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամների՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Չինաստանի, Ռուսաստանի և Ֆրանսիայի կողմից: Շուտով դրանց միացան այնպիսի ազդեցիկ երկրներ, ինչպես Գերմանիան, Իտալիան, Հնդկաստանը, Ճապոնիան, Իրանը, Կանադան և Եվրոպայի, Ասիայի ու Աֆրիկայի բազմաթիվ այլ պետություններ: Ճանաչմանը հաջորդեց դիվանագիտական հարաբերությունների հաստատումը Հայաստանի հետ: Այսօր, ՄԱԿ-ի անդամ 193 պետություններից Հայաստանի Հանրապետությունը դիվանագիտական հարաբերություններ ունի մոտ 160 պետության հետ, որը վկայում է Հայաստանի կարևորության և բարձր հեղինակության մասին: Եվ եթե դրան ավելացնենք, որ Հայաստանը դեսպանությունների մակարդակով դիվանագիտական ներկայացուցչություններ ունի աշխարհի մոտ 60 պետությունում, իսկ երեսունից ավելի պետություններ դեսպանություններ են բացել Երևանում, ապա պատկերն ավելի ամբողջական և տպավորիչ կդառնա: Առաջինը Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Լիտվան (21.11.1991 թ):

դարձնել Ադրբեջանի ենթակայությանը: Հայաստանը մերժում է երկու նախապայմաններն էլ և գտնում, որ հարևան երկրների միջև պետք է հաստատվեն նորմալ հարաբերություններ, և վիճելի հարցերը լուծվեն խաղաղ ճանապարհով՝ հիմնված միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների, այդ թվում ժողովրդի ինքնորոշման իրավունքի վրա:

Խորհրդային Միության փլուզումից հետո ստեղծվեց մի նոր միջազգային կառույց՝ Անկախ պետությունների համագործակցություն (ԱՊՀ), որի կազմի մեջ ընդգրկվեցին նախկին խորհրդային հանրապետություններից ինը, այդ թվում և Հայաստանը: Դա կարևոր էր ԽՍՀՄ-ի վերացումից հետո ծանր դրության մեջ հայտնված բոլոր նախկին խորհրդային հանրապետությունների համար:

Հայաստանն անդամակցում է նաև եվրոպական մի շարք կառույցների, այդ թվում Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությանը, որի մեջ մտնում են եվրոպական բոլոր երկրները, ԱՄՆ-ը և Կանադան, թվով 55 պետություն, Եվրամիության պառլամենտի երկրորդ պալատին՝ Եվրոպայի Խորհրդին (Council of Europe), որի կազմի մեջ մտնում են 47 պետություն: Հայաստանը 2004 թ. մասնակցում է «Եվրոպական հարևանության քաղաքականությանը», որը նախապայմաններ է ստեղծում եվրոպական կառույցներին Հայաստանի ինտեգրման համար:

Հայաստանը անդամ է նաև մի շարք այլ միջազգային կազմակերպությունների, ինչպես Համաշխարհային առևտրական կազմակերպությունը, Արժույթի միջազգային հիմնադրամը, Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը, Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունը և այլն;

2015 թ. հունվարի 2-ին Հայաստանը մտավ Եվրասիական տնտեսական միության մեջ և Ռուսաստանի, Բելառուսի ու Ղազախստանի հետ դարձավ ԵԱՏՄ-ի լիիրավ անդամ: Դա ինտեգրացման ուղղությամբ համարձակ քայլ էր, որը միանշանակ չընկալվեց Հայաստանի և միջազգային, հատկապես եվրոպական, հանրության կողմից: Սակայն ԵԱՏՄ-ին միանալը չէր նշանակում կապերի խզում Եվրամիության հետ և կամ նրան մեջքով շրջվել: Բազմապիսի կոնտակտները նրանց միջև շարունակվում են: Եվ ինչ-

1700-ամյակը մեծ շուքով նշվեց 2001 թ.: Դա ընդունեցին քրիստոնյա բոլոր հարանվանությունները: Մեծ նշանակություն ունեցավ նաև Հռոմի Ֆրանցիսկոս I պապի այցելությունը Հայաստան 2016թ. հունիսին, որը նա բնութագրեց որպես «Ուխտագնացություն աշխարհում առաջինը քրիստոնությունը պետական կրոն հռչակած երկիր՝ Հայաստան»:

Հայաստանն իրականացնելով անկախ և սուվերեն պետության իր կարգավիճակը, կամքը և հաստատակամությունը, դարձել է արդի միջազգային հանրության լիիրավ, լեգիտիմ և գործունյա անդամ: Դա Հայաստանի արդիական պետություն դառնալու ամենակարևոր հենասյուներից մեկն է:

3. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ Է, ԻՍԿ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ՝ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԱՄԵՆԱՄԱՐՏՈՒՆԱԿ ԲԱՆԱԿԸ

Հայկական անկախ պետության գոյության առաջին օրվանից նրա ամենակարևոր խնդիրներից մեկը եղավ և շարունակում է մնալ Հայաստանի և նրա բնակչության անվտանգության ապահովումը, նրա քաղաքական և տնտեսական զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը, հայերի նկատմամբ ցեղասպանատիպ ամեն տեսակի սպառնալիքների կանխումը՝ նշանաբան ունենալով «Այլևս երբեք» բանաձևը: Հայաստանի Հանրապետության միջազգային հանրության լիիրավ անդամ դառնա-

Հայաստան պետության ղեկավարության ուշադրության կենտրոնում են Հայաստանի զինված ուժերի կատարելագործման, արդիական զենքով ապահովման, բարձրակարգ և գրագետ հրամանատարական կազմի պատրաստման հարցերը:

Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականության մեջ մեծ տեղ է հատկացվում ռազմական համագործակցությունը տարբեր երկրների, առաջին հերթին Ռուսաստանի հետ: 1995 թ. մարտի 16-ին Հայաստանի և Ռուսաստանի միջև ստորագրվեց պայմանագիր, ըստ որի Հայաստանը Ռուսաստանին տրամադրեց բազա: Երկու տարի անց՝ 1997 թ. օգոստոսի 29-ին, նրանց միջև ստորագրվեց «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագիր»: Հայաստանը և Ռուսաստանը դարձան ռազմավարական դաշնակիցներ: Եթե դա Հայաստանին պետք է իր անվտանգությունն ամրապնդելու տեսակետից, ապա Ռուսաստանը ձեռք բերեց գործընկեր Անդրկովկասյան-մերձավորարևելյան տարածաշրջանում և ամրապնդեց իր դիրքերը: Հայաստանը դառնում է ռազմական գործոն, որն ավելի է կարևորվում Հավաքական անվտանգության պայմանագրային կազմակերպությանը՝ ՀԱՊԿ-ին, անդամակցությամբ, որի հետ համատեղ պարբերաբար կազմակերպվում են զորավարժություններ, այդ թվում և Հայաստանի տարածքում:

(Շարունակելի)

Բաքվում հրատարակված «Գործ» ամսագրի 1917 թ. 2-րդ և 3-րդ համարներում տպագրվել է գրող, թարգմանիչ, հրապարակագիր Զապել Եսայանի (1878-1943) «Ժողովուրդի մը հոգեվարքը (Աքսորեալ հայերը Միջագետքի մէջ)» վերնագրով նյութը: Պատմություն, որը նա լսել ու գրի է առել դեպի Միջագետքի անապատներ աքսորված հայ ժողովրդի մի ստվար հատվածի ողբերգության ականատես-վկա Հայկ Թորոյեանից: Զ. Եսայանի փաստավավերական արժեք ունեցող այս «արձանագրությունները» գալիս են լրացնելու Միջագետքի անապատներում տեղի ունեցած եղերական իրադարձությունները վերապրածների և այլազգի բազմաթիվ ականատեսների տեղեկությունները, նկարագրությունները, կոտորածներին վերաբերող մանրամասները:

Գիտական հանրությանն անծանոթ այդ ընդարձակ նյութից ստորև հրապարակում ենք մի հատված:

Անուշավան ՀԱՔԱՐՅԱՆ
«Պատմաբանասիրական հանդեսի» գլխ. խմբ. տեղակալ, բանասիրական գիտությունների դոկտոր

ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՄԸ ՀՈԳԵՎԱՐՔԸ

(Աքսորեալ հայերը Միջագետքի մէջ)»

Հայաստանցի հայերու տեղահանութենէն դրուագներ. Տիգրանակերտ. Մարտին. Ռասուլէյնի մէջ. Թէլէպիադի մէջ. Եդեսիայի մեջ. Արաբ Բունար:

Տիգրանակերտցի քանի մը շատ հարուստ սեղանաւորներ կը յաջողին, ահագին կաշառք տալով, քաղաքէն մեկնիլ: Բայց ճանապարհին զիրենք կը բաժնեն իրենց ընտանիքներէն և Սևերեկի ու Եդեսիոյ մէջտեղ կըսպաննեն զիրենք: Իրենց կիները ու աջիկները, մօտ 200 հոգի, ապահով տեղ կը հասնեն և կը պատմեն հետևեալ դէպքերը, որոնց հետևած են օրը օրին:

Առաջին անգամ կառավարութիւնը ձերբակալելով Տիգրանակերտի և շրջակայքի հայերէն 650 հոգի, Տիգրիսի վրայէն լաստերով ղրկած է դէպի Մուսուլ, բայց քաղաքէն քիչ մը հեռանալէ ետքը ժանտարմաները կը պատռեն լաստերու տիկերը, և աքսորեալները ամբողջովին կընկղմին Տիգրիսի մէջ: Անոնք, որ կը կարողանան լողալով գետեզրը հասնել, այնտեղ գտնուող ժանտարմաներէն հրացանազարկ կըլլան:

Այս դէպքէն ետքը Տիգրանակերտի ժողովուրդէն այրերը իրենց դիրքին և հարստութեան կարգով մաս մաս կը հեռացնեն քաղաքէն և զանոնք ողջ ողջ թաղելով ցորենի հորերու մէջ, վրաներնին կը փակեն քարերով, ուր և շնչահեղձ կը մեռնին: Մաս մըն ալ Տիգրիսի եզերքը խեղդամահ ընելով, կը ջնջեն, և մնացեալը, այր և կին միասին, խումբ խումբ Մարտինի գծով կը ղրկեն դէպի Ռասուլէյն: Ճամբան այրերը կիներէն բաժնելով, մինչև 6 տարեկան տղաքը ճանապարհին մօտ ձորերու մէջ տանելով, կը կոտորեն: Կիները տակաւին Մարտին չի հասած՝ յարձակում կը կրեն չեչեններու կողմէ, որոնք զատելով գեղեցիկ աղջիկները, չարաչար կը բռնաբարեն, իսկ քիւրդերը անընդհատ կը կողոպտեն զիրենք: Այրերու կոտորածի միջոցին կիները մէկ կողմ կեցուցած էին, և իրենց կը հասնէին ձորերուն մէջ կոտորուող մարդոց օրհասական աղաղակները: Տիգրանակերտի և շրջակայ գիւղերու ժողովուրդին կոտորածը այնքան սաստիկ կըլլայ, որ Տիգրանակերտէն մինչև Մարտին ձորերը դիակներով լիքն էին և Սևերեկէն մինչև Եդեսիա ճամբուն երկու կողմը դիակներով ծածկուած էին:

Թիւրք զինուոր մը, որ Վանայ կռիւներուն մէջ վիրաւորուած էր և միևնոյն ճամբէն անցնելով հասած էր Ճալապլուգ, կը պատմէր հետևեալը.

Պիթլիս-Սղերդ ճանապարհին հայ գիւղի մը մէջ տեսայ հայ կին մը, որ ոտքերէն կախուած էր. գլուխը հողէն մէկ մեթր բարձր էր. երեք մատղաշ զաւակները ոտքերնուն գամած էին գետնին. տակաւին ողջ էին և կը ձգտէին իրարու հասնիլ: Թիւրք զինուորականներ քիչ հեռու կեցած էին և նշանառութեան փորձեր կընէին ճօճուող կնոջ վրայ, գնդակ արձակելով աչքերուն և ծիծերուն:

Կնոջ յանցանքը այն էր, որ տեղահանութենէ խուսափելու համար իր զաւակներուն հետ պահուըտած էր:

Մարտին. Տիգրանակերտէն անմիջապէս ետքը Մէմտուհ պէյի հսկողութեան ներքև կըսկսի Մարտինի տեղահանութիւնը և կոտորածը: Այրերը կը ժողվեն,

պատրուակելով, թէ անոնք պիտի յատկացուին ճանապարհի նորոգութեան գործերու, բայց անմիջապէս որ քաղաքէն դուրս կը հանեն, Տիգրանակերտի և Մարտինի ձորերուն մէջ կը կոտորեն զիրենք:

Պաղտատի մէջ թիւրք զինուորական մը ինձ կը պատմէր, թէ բոլոր ձորերը լեցուն էին դիակներով և գրեթէ անոնց խորութեան կէսը ծածկուած էր. դաշունահար մարդոցմէ հոսած արիւնը այնքան առատ էր, որ ջուրի պէս կը հոսէր:

Տիգրանակերտի, Մարտինի, Սղերդի, Խարբերդի տեղահանութիւնը կազմակերպած էր Խալիլ պէյ, որ Պոլսէն եկած էր յատուկ այս պաշտօնով: Անիկա կազմած էր առնաւուղներէ, չեչեններէ, չերքեզներէ չեթաներ, որոնց պաշտօնն էր հայերու բնաջնջումը: Ու այդ բոլորը մինչև գործադրութեան օրը գաղտնի պահուած է թէ հայ, թէ թիւրք ժողովուրդէն: Այս շրջաններու տեղահանութիւնը եղած է ամենէն բարբարոս կերպով. այրերը կոտորուած են և կիներն ու երեխաները ենթարկուած են ամեն կարգի չարչարանքներու:

Ռասուլէյնի մէջ. Իմ բարեկամս՝ երկաթուղիի շինութեանց պաշտօնեայ, որ իր պաշտօնին բերումով շարունակ կերթար Ռասուլէյն և կը վերադառնար, պատմեց հետևեալը.

Առաջին անգամ որ Ռասուլէյն հասայ, տեսայ կայարանին և գիծին երկու կողմերը ընդարձակ տարածութեան մը վրայ խռնուած հազարաւոր հոգիներ՝ կին և երեխայ: Չեչեններ, չերքեզներ, թիւրք զինուորներ և զինուորականներ ազատ կերպով կը մտնէին այդ խումբերուն մէջ և ամեն անգամուն իրենց հետ դուրս կը բերէին աղջիկներ, գոյքեր, զարդեղէն, դրամ և այլն: Տեղեկացայ, որ ասոնք Տիգրանակերտի, Մարտինի և մասամբ Խարբերդի տեղահան եղած ժողովուրդի բեկորներ են: Մուրացկանի վիճակին վերածուած՝ անոնք կը թափառէին ամեն կողմ, կը թափուէին գնացքին վրայ և այնքան կորսնցուցած էին ինքզինքնին պաշտպանելու բնազդը, որ անզգուշութեամբ կը նետուէին անիւներուն ներքև: Ամեն անգամում կառախումբը մանուկներ ճզմելով, արիւնոտած կը վերադառնար: Քանի մը անգամ գաղտնաբար մտայ տարագիր հայերու խումբերու մէջ և զգացի իրենց հոգեվարքը: Անօթի, դժգունած, վտիտ, կէս դիակներու վերածուած՝ անոնք աղերսագին կտոր մը հաց կուզէին: Ամեն անգամուն հետս կը բերէի հինգ պարկ ալիւր և կը բաշխէի հապճեպով, բայց իրենց վրայ հսկող զինուորները և ժանտարմաները, երբ ալիւր կը տեսնէին հայերու ձեռք, կը խլէին և կը տանէին ուրիշներու ծախելու: Մահացու յուսահատութիւնը այնքան տիրապետած էր իրենց, որ կիներ ինքզինքնին գնացքին ներքև կը նետէին. թիւրք զինուորականները ոչ միայն ոևէ արգելք չէին դներ այս ինքնասպանութիւններուն, այլ մօտ կեցած կը նայէին և կը ծիծաղէին: Տեսայ նոյնիսկ, որ կիներ ու քանի մը մանուկներ շարելով գիծին վրայ, վակոն մը կը գլտորցնէին և բարձրաձայն կը ծիծաղէին անոնց ջախջախուիլը, վիրաւորուիլը և ցաւի ազդեցութեան տակ անոնց գալարուիլը տեսնելով:

Անօթութիւնը, տաքը, իրենց հսկողներուն անխիղճ վերաբերմունքը այնպիսի անտանելի կեանք մը ստեղծած էր, որ աքսորեալներուն հոգեվարքի հեծեծանքները հասան մինչև Հալէպ և վրդովմունք յառաջ բերին ոչ - թիւրք ժողովուրդներու մէջ: Գայթակղութեան առաջքը առնելու համար կառավարութիւնը որոշեց զիրենք հեռացնել և փոխադրել մինչև Մծբին:

Բարեկամս, խորհելով մինչև ասոնց մեկնումը գոնէ որոշ թիւով մանուկներ ազատել, հետևեալ հնարքին դիմեց: Իր հետ կունենար մեծ զամբիւղներ, որոնցով զանազան վայրերէ հնդկահաւեր կը փոխադրէր Հալէպ: Կը մտածէ այդ զամբիւղները օգտագործել և ամեն օր դաշտերէն հայ մանուկներ ժողվելով, կը դնէ զամբիւղներուն մէջ և կը բերէ Հալէպ:

Թէլէպիադէն մինչև Արաբ Բունար երկաթուղիի գիծը ամբողջովին հայ կնոջ և երեխայի արիւնով ողողուած է և գիծին երկու կողմը գրեթէ անընդհատ կը հանդիպէք գնացքին ներքև ջախջախուած դիակներու, որովհետև գիշերային փոխադրութիւններու միջոցին թիւրք ժանտարմաները կը նստեցնէին իրենց յանձնուած ժողովուրդը գիծին վրայ: Հայաստանի խորերէն եկած խեղճերը չեն գիտեր, թէ գիծը ի՞նչ է, գաղափար չունին գնացքի մասին և երբ յոգնաբեկ և սպառած տարածուած են գիծերուն վրայ և կը քնեն, կառախումբը յանկարծակիի կը բերէ զիրենք: Ամեն անգամուն գնացքը կըստիպուէր կենալ դիակներու վրայ. ջախջախուած մարմինները մէկ մէկ կը շպրտէին մէկ կողմ և միւսներուն կըստիպէին հեռանալ ու ճամբան բանալ:

Եդեսիոյ մէջ (Ուրֆա). Խարբերդէն, Սեբաստիայէն և այդ շրջաններէն տեղահան եղած հայերէն մաս մը, կին և երեխայ, լեցուցած էին տեղւոյն կառապանների մեծ խանին մէջ: Քաղաքներու մէջ զգոյշ էին և չէին կարող շատ սանձարձակ կերպով վարուիլ աքսորեալներուն հետ, բայց Եդեսիայի թիւրք հարուստները կը պայմանաւորուէին ժանտարմաներու հետ և գիշերանց մտնելով խանը, կարթնցնէին կիները ու աղջիկները և ընտրելով ամենէն գեղեցիկները, կը տանէին:

Կացութիւնը անտանելի էր այս թշուառներուն համար. ապրելու դժուարութիւնները այնքան բուռն էին, որ մայրեր հարկադրուած էին սոսկալի ընտրութիւն մը ընել. այն է՝ իրենց զաւակներուն մէկ մասը փրկելու համար ծախել մնացեալը:

Ուրֆայի ամենօրեայ շուկան դարձած էր մանուկներու պազար. ամենէն գեղեցիկ տղան կը ծախուէր 10 դրուշի:

Արաբ Բունար. Տրապիզոնէն, Սամսունէն, Պաֆրայէն, Սեբաստիայէն և Ամասիէն տեղահան եղած ժողովուրդներու ողորմելի մնացորդներ էին, որ կը հասնէին Արաբ Բունար: Ասոնք ամիսներէ ի վեր երկար և մանուածապատ ճամբաներէ հետիոտն, բոկոտն, անօթի թափառելէ ետքը կը հասնէին՝ հագուստներնին պատառոտած, ոտքերնին արիւնած, որովհետև կօշիկ չէր մնացած այլ ևս: Արաբ Բունարի մէջ հայ վաճառականներէ գրաւուած ցորենը թափուած՝ անտէր կը մնար. աքսորեալները սովալլուկ վիճակի մէջ անյագաբար կիյնային վրան և հողով, քարով խառն կուլ կու տային այդ ցորենը անասուններու նման: Ցորեն ուտողները հազիւ կապրէին 20-24 ժամ և փորերնին ուռելով, կը մեռնէին սարսափելի ցաւերով և գալարումներով: Կառավարութիւնը փոխանակ արգելելու՝ նոր եկող խումբերուն ցոյց կու տար թափուած ցորենը, երբ ժողովուրդը հաց կաղաղակէր:

Տեղահան ժողովուրդին վրայ հսկելու պաշտօն ունեցող ժանտարմաներուն անգթութիւնը և հնարամտութիւնը՝ խեղճերը չարչարելով սպաննելու, ամեն մարդկային երևակայութենէ դուրս է: Ասոնք ընդհանրապէս ընտրուած էին Եդեսիոյ, Պէրէճիքի, Սամսադի շրջաններու գազանաբարոյ թիւրքերէ և քիւրդերէ: Զինուորութենէ փախած ըլլալով, կըզբաղէին աւազակութեամբ և ենթարկուած էին կառավարութեան հետապնդումներուն, բայց երբ հայկական հալածանքները պիտի կազմակերպուէր, կառավարութիւնը յայտարարեց, որ ամեն անոնք, որ յանձնուին, ժանտարմա կարձանագրուին և պաշտօն ստանալով երկրին ներսերը, զերծ կըլլան պատերազմի դաշտ երթալէ: Այս փախստականները փութացին օգտուիլ, և այս անզուսպ վայրենիներուն է, որ յանձնուեցաւ տեղահան եղած ժողովուրդը. ժանտարմաներու վրայ տասնապետ կարգուած էին համիդեան ռեժիմէն մնացած տասնապետներ:

Տեղահան եղած ժողովուրդը բնաջնջման դատապարտուած ըլլալու, անոնք բոլորովին անպաշտպան յանձնուած էին այս մարդակերպներու դիւային չարագործութեանց. լիազօրութիւն ունէին իրենց ոճրագործ երևակայութեան քմահաճոյքներուն համեմատ մահուան եղանակներ ընտրել իրենց յանձնուած զոհերուն համար. այդ է պատճառը, որ անսանձ և անարգել կերկարէին անոնց հոգեվարքը, կենթարկէին զանոնք հոգեկան և ֆիզիքական բոլոր անպատմելի չարչարանքներուն, կերկարէին աքսորեալներու տաժանելի ճամբորդութիւնը, կը բաժնէին սիրելիները իրարմէ, անօթի և ծարաւ պահելէ ետքը երկար ատեն՝ կուտային անոնց այնպիսի ուտելիքներ, որ փոխանակ սնուցանելու՝ տանջանքներով մահուան կենթարկէին զանոնք, և իրենց չարաբաստիկ հեղինակութիւնը ի գործ կը դնէին յառաջ բերելու համար այնպիսի տառապանք, որ ամենէն դիւային երևակայութիւնն իսկ անզօր է պատկերացնելու:

ՃԱՆԱՉՎԱԾ ՊԱՏՄԱԲԱՆԸ

(Արարատ Մխիթարի Հակոբյանի ծննդյան 70-ամյակի առթիվ)

Լրացավ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր Արարատ Մխիթարի Հակոբյանի ծննդյան 70-ամյակը: Ծնվել է 1947 թ. փետրվարի 26-ին ՀՍՍՀ էջմիածնի շրջանի (ներկայիս՝ Արմավիրի մարզ) Ապագա (նախկին՝ Թուրքմենլու) գյուղում՝ երկրագործի ընտանիքում: Նախնիները պատմական Սասունից են: Տոհմի պատմական արմատները, հարազատների ապրած կյանքը էապես պայմանավորել են Ա. Հակոբյանի հետաքրքրությունը պատմական Հայրենիքի, առհասարակ՝ հայ ժողովրդի պատմության հանդեպ:

Ա. Հակոբյանը 1966-1971 թթ. ուսանել և բարձր առաջադիմությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Համալսարանն ավարտելուց հետո (ասպիրանտուրա ընդունվելու երաշխավորագրով) նույն՝ 1971 թ., աշխատանքի է անցել ՀՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում՝ որպես ավագ լաբորանտ: Մասնագիտանալով նոր շրջանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության հարցերում՝ ուսումնասիրել է Արևելյան Հայաստանի ու, մասնավորապես, Կարսի մարզի պետական գյուղացիների պատմության հիմնախնդիրները: 1980 թ. հաջողությամբ պաշտպանել է «Կարսի մարզի պետական գյուղացիները 1878–1917 թթ.» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը և ստացել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1977–1982 թթ. պատմության ինստիտուտում վարել է կրտսեր գիտաշխատողի պաշտոն: 1982 թ. հունվարից դասախոսական աշխատանքի է անցել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում. սկզբում՝ ավագ դասախոսի, իսկ 1985 թ.՝ դոցենտի պաշտոնում: 2000 թ. նշանակվել է Ճարտարագիտական (նախկին ԵՊԻ) համալսարանի պրոֆեսորի պաշտոնում, իսկ 2006 թ. Բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1988 թ. սկիզբ առած Արցախյան շարժման, ԽՍՀՄ փլուզման և Հայաստանի անկախացման գործընթացների հրամայականով՝ Ա. Հակոբյանը հանրապետությունում առաջիններից մեկը ձեռնամուխ եղավ մեզանում հայոց պատմության մինչ այդ, ըստ էության, փակ համարվող թեմաներից մեկի՝ Հայաստանի առաջին հանրապետության պատմության հետազոտությանը: Օգտվելով Ազգային գրադարանի գրականության ու մամուլի հատուկ բաժիններից, գաղտնազերծված արխիվային ֆոնդերից՝ կարճ ժամանակամիջոցում՝ 1992 թ., լույս ընծայեց «Հայաստանի Հանրապետություն (1918–1920 թթ.)», իսկ 1994 թ.՝ «ՀՅԴ 9-րդ Ընդհ. ժողովը» վերնագրերով գրքույկները, ինչպես նաև գիտական ու հրապարակախոսական բազմաթիվ հոդվածներ: 1990-ական թվականներին հանրապետության գիտական պարբերականներում՝ «Պատմաբանասիրական հանդես», «Լրաբեր հասարակական գիտությունների», «Դրոշակ» և այլն, իրար հետևից լույս տեսան Հայաստանի Առաջին Հանրապետության քաղաքական և կուսակցական համակարգի պատմության հարցերին նվիրված մի շարք ուսումնասիրություններ: Արդյունքում՝ 1998 թ., հաջողությամբ պաշտպանեց «Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918–1920 թթ.)» վերնագրով դոկտորական թեզ և ստացավ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2005 թ. սույն աշխատանքը լույս տեսավ իբրև մենագրություն:

Նկատենք՝ աշխատության մեջ բազմակողմանիորեն փաստարկվում ու հիմնավորվում է այն իրողությունը, որ Առաջին աշխարհամարտի և ռուսական 1917 թ. հեղափոխությունների ժամանակաշրջանների թոհուբոհում Մեծ եղեռն տեսած հայ ժողովուրդը դարավոր ընդմիջումից հետո իր մեջ ուժ գտավ հայրենիքի մի փոքր հատվածում վերականգնել անկախ պետականությունը և ընդամենը երկուսուկես տարում կայացնել Հայաստանի Առաջին Հանրապետությունը: Ցույց է տրված, որ Առաջին Հանրապետությունը գրեթե բոլոր պարամետրերով՝ քաղաքական, պետաիրավական, ռազմադիվանագիտական և այլն, եվրոպական արժեքային համակարգին միտված կազմակերպված պետություն էր:

Ա. Հակոբյանի հրատարակած մենագրությունների շարքում, ըստ ամենայնի, կարելի է առանձնացնել պատմագիտական երեք հետազոտություն: Քաղաքական հույժ արդիական նշանակություն ունի Մոսկվայի և Կարսի 1921 թ. պայմանագրերի արդի իրողությունների լույսի տակ քննությունը. պայմանագրեր, որոնցով, փաստորեն, Ռուսաստանը և Թուրքիան որոշել են Հայաստանի պետական սահմանները և այն պարտադրել հայ ժողովրդին: «Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում» (2010 թ.) վերնագրով սույն մենագրությունում փաստական-վավերագիր հարուստ նյութերի հիման վրա ցույց է տրված, որ այդ պայմանագրերը Հայաստանին ու հայ ժողովրդին ուժով պարտադրված, միջազգային իրավունքի կոպիտ խախտմամբ կնքված ապօրինի պայմանագրեր են և ենթակա են չեղարկման:

Ա. Հակոբյանի «ՀՍԽՀ 1921 թ. ներքաղաքական կյանքի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ» (2014 թ.) խորագրով ուսումնասիրության մեջ քննական ու վերլուծական մոտեցմամբ ներկայացված են խորհրդային, հետխորհրդային և սփյուռքահայ պատմագիր ու հուշագիր հեղինակների տեսակետներն ու դիրքորոշումները 1921 թ. Փետրվարյան ապստամբության, ռազմական կոմունիզմից ՆԷՊ-ի անցման, Գ. Նժդեհի ու զանգեզուրյան իրադարձությունների, պետական շինարարության, քաղաքական կուսակցությունների լուծարման և առանցքային այլ հարցերի վերաբերյալ:

2016 թ. ընթերցողի դատին հանձնվեց ճանաչված պատմաբանի հերթական ուսումնասիրությունը՝ «Միակուսակցական վարչակարգի ձևավորումը Խորհրդային Հայաստանում (1920-ական թվականներ)» վերնագրով

Ընդհանուր առմամբ, Ա. Հակոբյանը հրատարակել է 15 մենագրություն, ավելի քան 90 գիտական հոդված, 60-ից ավել հասարակական-քաղաքական տարաբնույթ հրապարակումներ:

Հարկ է նշել, որ 1990-ական թվականների կեսերից Ա. Հակոբյանի համահեղինակությամբ մի քանի հրատարակությամբ լույս են տեսել «Հայոց պատմություն» բուհական ուսումնական ձեռնարկը և ուսումնամեթոդական այլ աշխատանքներ: Ակադեմիկոս Վլ. Բարխուդարյանի ընդհանուր խմբագրությամբ 2007–2008 և 2013–2014 թթ. 8-րդ և 9-րդ դասարանների համար լույս տեսած «Հայոց պատմության» դպրոցական դասագրքերի համահեղինակ է:

Վերջին տասնամյակում Ա. Հակոբյանը մասնակցություն է ունեցել նաև «Հայոց պատմություն» բազմահատորյակի հեղինակային և խմբագրական աշխատանքներին: Նրա հեղինակությամբ է պատրաստված 4-րդ հատորի՝ Առաջին հանրապետությանը նվիրված բաժնի զգալի մասը:

Ա. Հակոբյանը եղել է թեկնածուական մի քանի ատենախոսությունների ղեկավար, դոկտորական և թեկնածուական բազմաթիվ ատենախոսությունների պաշտոնական ընդդիմախոս:

Տարիներ շարունակ Ա. Հակոբյանը հանրապետության մի շարք բուհերում (Գորիսի, Գավառի և «Գլաձոր» համալսարաններում) նախագահել է պետական ավարտական քննությունները՝ հայոց, համաշխարհային և միջազգային իրավունք առարկաների գծով:

2009–2016 թթ. ընդգրկված է եղել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող գիտական աստիճաններ շնորհող ԲՈՀ-ի մասնագիտական խորհրդի կազմում:

Շնորհավորելով ՊԲՀ-ի հետ համագործակցող մեր գործընկերոջ հոբելյանը՝ մաղթում ենք նրան առողջություն, երկար տարիների ստեղծագործական բեղմնավոր աշխատանք:

Անուշավան ՉԱՔԱՐՅԱՆ
«Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագրի տեղակալ, բանասիրական գիտությունների դոկտոր

ԳԻՐՔ, ՈՐ ՁԱՐԳԱՑՆՈՒՄ Է ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԹՆԱՑՆՈՒՄ ԽԻՂՃԸ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովհաննես Ստեփանյանի «Իրավունքի փիլիսոփայություն» արժեքավոր աշխատության մեջ երևակվում են հայոց քրիստոնեական հավատքի, դավանանքի և փիլիսոփայական քանքարի մտածողական աղերսները, նարեկացիական ոգուն հավատարիմ բառազուգորդումները, ինչպես նաև իրավագիտության խնդրաշարի խոհափիլիսոփայական արծարծումների անձնական բանաձևումները: Մենագրությունը, հեղինակի խոստովանությամբ, ծնվել է անհանգստությունից, որի պատճառը Հայաստանի տխուր ներկան է և մշուշոտ ապագան: Ի՞նչ դեր ունի և ինչպիսի՞ն է իրավունքն այդ ներկայում, ինչպիսի՞ն է լինելու ապագայում: Ի՞նչ է իրավունքն ընդհանրապես, ի՞նչ իմաստ ունի: Նման հարցերի պատասխաններից է ձևավորվել իրավունքի այս փիլիսոփայությունը:

Հեղինակի հայեցակարգային ըմբռնման հիմքում ընկած է արդիականացված աստվածակենտրոն աշխարհայացքը, ըստ որի բանականությունը և հավատը, գիտությունը, փիլիսոփայությունը, իրավունքը և կրոնը ոչ թե հակադրվում, այլ փոխադարձաբար լրացնում են միմյանց:

Պրոֆ. Ստեփանյանի ինքնատիպ իրավունքի փիլիսոփայությունն աճում է հավատից, ողջ իրավական նյութի և գիտական գիտելիքների հիմքից: Միաժամանակ, Ստեփանյանի կարծիքով դրական իրավունքը, այսինքն՝ գործող օրենսդրությունը, չի կարող գործել, եթե նախապես չվերածվի մարդկանց ներաշխարհի, ապրումների իրողության: Իրավունքը մարդուց կտրված մի բան չէ, այն թափանցում է մարդու ամբողջ էությունը, կարգավորում և ղեկավարում է նրա արարքները: Իրավունքի էությունը մեր առջև հառնում է իր ամբողջ առարկայական անմիջականությամբ:

Իրավունքի իդեան գաղափարների համակցությունն է, դրական իրավունքը՝ նորմերի համակցությունը, իսկ սուբստիտուցիոնալ իրավունքը՝ նորմատիվ պատկերացումների համակցությունը: Իրավունքը՝ պրոֆ. Ստեփանյանի պատկերացմամբ հիշեցնում է մարմին, հոգի և շունչ ունեցող մարդու: Մարմինը դրական իրավունքն է, հոգին՝ իրավունքի իդեան, շունչը՝ սուբստիտուցիոնալ իրավունքը: Առանց հոգու՝ իրավունքի իդեայի, չի կարող գոյություն ունենալ դրական, հետևաբար, նաև սուբստիտուցիոնալ իրավունք, առանց շնչի՝ սուբստիտուցիոնալ իրավունքի, դրական իրավունքն անշունչ, կամ, որ նույնն է, մեռած իրավունք է, առանց մարմնի, այսինքն, դրական իրավունքի, չի կարող գոյություն ունենալ սուբստիտուցիոնալ իրավունք, իսկ իրավունքը չի կարող դառնալ սոցիալական իրականության պիտոյական ձև, իրավական պարտադրականության անհրաժեշտ եղանակ: Մարդը իրավական-սոցիալական էակ է՝ իր ձգտումների իրագործման իրական հնարավորություններով և ապրումներով:

Իրավունքը, որպես սոցիալական կյանքի պիտոյական ձև, սերտորեն կապված է մարդու և մարդկային կյանքի հետ՝ իրավունքն իմաստավորվում է մարդկային կյանքի հիմնարար նպատակով և իմաստով: Մարդկային գոյության նպատակը բնութագրելիս հեղինակը հատուկ ընդգծում է, որ մարդն արարված է Աստծուն միավորվելու և աստվածանալու համար, հետևաբար իրավունքի իմաստը մարդու աստվածացման համար նվազագույն պայմաններ ստեղծելու մեջ է: Աստվածը, նրա աստվածային կամեցումն է նվիրագործում մարդու իրավական վարքն ու գործունեությունը: Թեև շատ դեպքերում դժվար է դատել այն մասին, թե առանձին մարդու մեջ ինչն է «խոսում»՝ աստվածայինի՞ կանչը, թե «մեղսավոր-հողեղեն մարմնի ձայնը»:

Ինչո՞ւ է պրոֆ.Ստեփանյանն այդքան մեծ նշանակություն հատկացնում իդեաներին: Նախ՝ իդեաների մեջ ներառված են կամայնությունը, արդարությունը, որոնք, այսպես թե այնպես արտահայտում են Աստծո կամքը: Երկրորդ, իրավունքի իդեան, իր բոլոր բաղադրիչներով հանդերձ մարմնավորվում է դրական իրավունքի մեջ: Երրորդ, իրավունքի իդեայի բաղադրիչները, մարմնավորվելով դրական իրավունքի մեջ, կարող են պահպանել կամ չպահպանել իրենց նախնական բովանդակությունը, այսինքն՝ համահունչ լինել կամ հակադրվել Աստծո կամքին: Դա Ստեփանյանին հանգեցնում է մի շատ կարևոր հետևության՝ անհնար է, որ իրավական նորմերը հակադրվեն Աստծո կամքին, քանի որ հոգեզուրկ դրական իրավունք ունեցող հասարակությունը պարզապես չի կարող գոյատևել:

Պրոֆ. Ստեփանյանը ընդգծում է, որ դրական իրավունքի, կամ, որ նույնն է, գործող օրենսդրության ձևավորման բոլոր փուլերում վճռորոշ նշանակություն ունի խիղճը, որն իրավունքի իդեայի մարմնացման հիմնական կառուցակարգն է: Մարդուն ստեղծելով իր պատկերով, Աստված նրան պարգևել է խիղճ, որի միջոցով մարդը կարողանում է հաղորդակցվել Աստծո հետ՝ հասկանալ նրա կամքը և ընտրել դրան համապատասխանող վարքագիծ: Իսկ երբ մարդը ոտնահարում է Աստծո կամքը և գործում է նրա կամքին հակառակ, խիղճը հանդիմանում է նրան, պարսավում, պատժում ու այդպիսով նրան ստիպում զղջալ: Հանճարեղ Կանտի խոսքերով «Խիղճը մարդու մեջ ներքին դատարանի գիտակցումն է, որի առջև նրա մտքերը միմյանց մեղադրում են և ներում»:

Պրոֆ. Ստեփանյանի գիրքը մերօրյա ազգային տագնապների փիլիսոփայական բարձրաձայնումն է՝ ավելի շատ իրեն ու իր խոհերը չպարտադրող մարդու, ամենքի առաջ չբացվող ներհուն հոգու՝ անկեղծ երկխոսության կանչող խոսքն է, որն ընկալելու համար առնվազն հոգեկից և ունկնդիր պետք է լինել տաղանդաշատ և խորհրդածող հայրենասերի մարդկային տեսակին:

Մանուկ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Փիլիսոփայական գիտությունների դոկտոր

Հայ տնտեսագիտական մտքի պատմության հանգույցներում

1990-ական թվականներին ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում դադարել էր խորհրդային տարիներին գործող տնտեսական պատմության և տնտեսագիտական մտքի պատմության բաժինը:

2007-ից ինստիտուտի տարեգրության մեջ սկսվում է մի նոր շրջափուլ, երբ ՀՀ կառավարությունը որոշում կայացրեց տնտեսագիտական ուղղվածություն ունեցող ճյուղային տարբեր ենթակայության գիտահետազոտական ինստիտուտները վերակազմակերպել և միացնել ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտական ինստիտուտին, որի տնօրինությունը ստանձնեց Վլադիմիր Հարությունյանը: Նրա նախաձեռնությամբ էլ ստեղծվեց «Տնտեսագիտության տեսության և տնտեսագիտական մտքի պատմության» բաժինը՝ ծայր տալով նոր հետազոտությունների:

Տնտեսական գիտության, իսկ առավելապես նրա պատմության ուսումնասիրության ժամանակ հաճախ ենք հանդիպում անունների, որոնց առաջադրած տեսությունները նպատակ ունեին կարգավորելու տնտեսական կյանքը և ապահովել «հասարակության նորմալ կենսագործունեությունը»: Հաճախ մեծ է այդ հեղինակներին մեզանից բաժանող ժամանակահատվածը: Գուցե և նրանց շատ հայացքներ այսօրվա բարձունքից կարող է միամիտ թվալ, բայց «Միանգամայն ճշմարիտ է, որ այն ամենը, ինչը մենք գիտենք, մենք գիտենք շնորհիվ նրանց» (Էլիոտ): Բազում ուսումնասիրություններ են գրվել նրանց մասին, համաձայնել կամ մերժել նրանց առաջադրած դրույթները, փորձել նրանց հայացքներում գտնել նոր շերտեր, արդի տնտեսագիտության դիտակետերից գնահատել նրանց ավանդը: Ովքեր են այդ մարդիկ, ինչպիսի ժամանակներում են ապրել, որն է նրանց բերած ավանդը տնտեսագիտության մեջ: Այդ նպատակին են ուղղված ինստիտուտի հրատարակած «Նշանավոր տնտեսագետների տողանը» երկհատորյակը (2009, 2012. առաջին հատորը Ռ. Սարինյանի, Մ. Աղայանի, երկրորդը՝ Ռ. Սարինյանի և Վ. Հարությունյանի հեղինակությամբ): Դրանցում բերված անունների գիտակենսագրական ուրվագծերն իրենց ամբողջության մեջ արտացոլում են յուրաքանչյուրի մտքի նշածողերը, այդ հավաքականության մեջ բովանդակելով տնտեսական մտածողության էվոլյուցիան, սկսած՝ մերկանտիլիստներից մինչև արդի շրջանի նոր ուղղությունները: Արդի փուլում, երբ մեծ է հասարակության հետաքրքրությունը տնտեսական տեսության նկատմամբ, աննախապաշար շարադրանքով նշված աշխատությունը լինելով հայերեն լեզվով, օգտակար կարող է լինել ոչ միայն տնտեսագետ մասնագետների, այլև հասարակության լայն շերտերի համար:

Հանրագիտարանական սկզբունքով գրված նմանատիպ մի աշխատություն է նաև «Հայ տնտեսագետներ» (2010, հեղ. Ռ. Սարինյան, Վ. Հարությունյան, Մ. Աղայան) մենագրությունը: Այն հայ տնտեսագիտական մտքի պատմության ուղեցույց է անձնականացված նրանում ընդգրկված անունների գիտակենսագրական ուղեգծերի ձևով և արտահայտում է հայ տնտեսագիտական մտքի շարժման ընթացքը ինչպես որ կա, հետազոտական շրջանակների հետագիծը՝ տնտեսական հարցերի բարդ ու հակասական լուծումների մեջ, սկսած XIX դարի կեսերից:

Ինչ խոսք, հայ տնտեսագիտական մտքի ակունքները սկիզբ են առնում հնագույն ժամանակներից: Սակայն, պարզ ու որոշ էր տնտեսությունը: Այդպիսին էին նաև նրա վերաբերյալ հայացքները, որոնք ավելի շուտ պատկանում էին հայ տնտեսագիտական մտքի նախապատմությանը: Եվ միայն XIX դարի կեսերին էր, որ հայ տնտեսագետները հայացքների քննությունը սկսում են կատարել արևմտյան տնտեսագիտական դպրոցներին բնորոշ հասկացություններով ու կատեգորիաներով: Եվ արդեն 70-ական թվականներին սկիզբ է առնում հայ հասարակական զարգացման կապիտալիստական շրջափուլը: Տնտեսական կյանքի փոխակերպությունը պայմանավորում է տնտեսական գիտության հասարակական անհրաժեշտությունը: Տնտեսագիտական միտքը ստորաբաժանվում է տարբեր հոսանքների, որը տարընթաց էր հասարակության սոցիալ-տնտեսական հեռանկարների հարցում:

«Հայ տնտեսագիտական մտքի հիմնական հոսանքները» (2013, հեղ. Ռ. Սարինյան) աշխատությունը պատկերում է XIX դարի 70-90-ական թվականների հայ տնտեսագիտական միտքը ազատամտական, ազգային-պահպանողական և նարոդնիկական հոսանքների ամբողջության մեջ:

XX դարասկիզբը մտավոր նոր կացություն էր ենթադրում հայ իրականության համար: Արդեն 1890-ական թվականների կեսերին, տնտեսական ու քաղաքական այդ նոր պայմաններում «ավանդական հասարակական հոսանքներն ավարտում են իրենց պատմական դերը»: Դա վերաբերում է նաև հայ տնտեսագիտական մտքի գլխավոր ուղղություններին: XIX դարասկիզբը չէր բնորոշվում հստակ ուրվագծված դպրոցների առկայությամբ, իսկ այդ ունիվերսալ մտածողության մեջ առկա էին և՛ մարժինալիզմի, և՛ պատմական դպրոցի, և՛ մարքիստական, և այլ ուղղությունների նստվածքները:

Այնուամենայնիվ, հայ տնտեսագիտական միտքը նշանավորվել է նոր շահեկան ուսումնասիրություններով, ընդլայնելով տնտեսական կյանքի ճանաչողության սահմանների վերաբերյալ իմացությունն ու պատկերացումները, հայ տնտեսագետները որոշակի խոսք են ասել տնտեսագիտության տեսության մեջ: Նրանց վկայակոչել են համաշխարհային տնտեսագիտական մտքի ամենահայտնի ներկայացուցիչները: Նշված ժամանակաշրջանի հայ տնտեսագիտական մտքի հարցերն է արծարծվում Ռ. Սարինյանի և Լ. Հարությունյանի «Էջեր հայ տնտեսագիտական մտքի պատմությունից» (2011), Ռ. Սարինյանի «Ալեքսեյ Չիվելեգովի տնտեսագիտությունը» (2008), Ռ. Սարինյանի և Ա. Թադևոսյանի «Բախշի Իշխանյան. Տնտեսագիտական հայացքները» (2015) մենագրություններում: Դրանցում անդրադարձ է կատարվում Բախշի Իշխանյանի սոցիոլոգիական մեթոդի սկզբունքներով հասարակության էվոլյուցիայի, Ռուսաստանի ու Գերմանիայի տնտեսական զարգացման առանձնահատկությունների, Կովկասի ժողովրդագրական վերլուծություններին, Վահան Տոտոմյանցի կոոպերացիայի տեսության ու պատմության բազմաթիվ աշխատություններին, Դավիթ Անանունի ռուսահայերի հասարակական զարգացման հետագծի և հավաքական հայության գաղափարներին, Ալեքսեյ Չիվելեգովի՝ Եվրոպայի տնտեսական էվոլյուցիայի և մարդու նոր տնտեսական պահվածքի վերաբերյալ դիտողություններին, տնտեսական ճգնաժամերի տեսության ու պատմության մեծագույն տնտեսագետներից մեկի՝ Մենտոր Բունիաթյանի, հայեցությանը, Սիմոն Զավարյանի գյուղատնտեսության ոլորտի ուսումնասիրություններին, որոնք ընդլայնեցին հայ տնտեսագիտական արծարծումների տեսական ու պատմական ոլորտները, նպաստելով առարկայի պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացմանը:

1990-ական թվականներին տնտեսագիտության որոնումների առանցքը դառնում է շուկայական տնտեսության անցման խնդիրները: Դա լուսավորության շրջան էր, երբ հայ տնտեսագիտական միտքը խորհրդային մտածողության միագիծ ու միակողմանի աշխարհընկալման փոխարեն յուրացնում էր արևմտյան տնտեսագիտական մտքի արժեքները: Մյուս կողմից, դա զուգահեռ՝ շուկայական տնտեսաձևին բնորոշ հաստատությունների ձևավորման, տնտեսության իրական հատվածի սկիզբ առած վերակառուցման և նոր տնտեսաձևերի արմատավորման ժամանակաշրջան էր: Տնտեսական կյանքի ստեղծված կացությունը, նոր տնտեսաձևերի ու գործառույթների ներհոսքը պայմանավորեցին բեկման շրջանին բնորոշ նոր թեմատիկ ոլորտների ուսումնասիրության անհրաժեշտությունը, փորձելով հասարակության տնտեսական պահվածքը ընթերցել նորագույն ուղղությունների մեկնություններում: Անցած տասնամյակներին, հայ տնտեսագիտությունը կուտակել է հսկայական նյութ, որի մատենագիտական ցանկը ընդգրկում է բազմաթիվ մենագրական ու կոլեկտիվ ուսումնասիրություններ, գիտական ժողովածուներում, ամսագրերում, պարբերական մամուլի այլևայլ հրատարակությունների էջերում տպագրված հոդվածներ, ուսումնական ձեռնարկներ, որոնք ներարձակ են տնտեսական երևույթների ճանաչողական ընդհանուր հոսքի մեջ: Ռ. Սարինյանի «Ուրվագիծ արդի հայ տնտեսագիտական մտքի պատմության» երկու գրքերը (2014), Վ. Հարությունյանի և Ռ. Սարինյանի «Տնտեսագիտության ինստիտուտը 10 տարում. 2006-2016 թթ.» (2016) մենագրությունները որոշակի պատկերացումներ են տալիս նորագույն շրջանի հայ տնտեսագիտական մտքի այդ անհետազոտ ոլորտի դիտակների վերաբերյալ:

Ռոբերտ ՍԱՐԻՆՅԱՆ
Տնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի «Տնտեսագիտության տեսություն և տնտեսագիտական մտքի պատմության» բաժնի վարիչ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՋՐԱՂԱՑՆԵՐԸ

Ջրաղացների թիվը Հայաստանում ուշ միջնադարում հասնում էր 1600-ի: Ջրաղացների կարողությունը սահմանվում էր աղացների քանակով, որն էլ իր հերթին կախված էր բնակավայրերի մեծությունից և աղացները շարժող ջրի քանակից:

Այս չափանիշներով շատ կարևոր ջրաղաց է Աշտարակի կամուրջի մոտ գտնվող Աշտարակի ջրաղացը, որը գոյություն ունի արդեն 400 տարի: Կամուրջը, որի մոտ կառուցվել է ջրաղացը, Աշտարակի պատմական 5 կամուրջներից մեկն է, որը կապում էր Աշտարակի չորս պատմական թաղամասերը՝ Բերդի, Ծիրանավորի, Կարմրավորի և Մարինեի թաղերը:

Աշտարակի ջրաղացը խոշոր ջրաղացներից է, որովհետև ունի վեց աչք: Աչքերի քանակը նրա տիրոջ հարստության չափանիշն էր:

Աշտարակի ջրաղացի հատակագծաճարտարապետական հորինվածքը բավական բարդ է: Այն հատակագծում ունի 23,6x8,4x30,0x9,3 մ չափեր: Բաղկացած է մեկ ալրաղաց բաժանմունքից, որն ունի 6 ալրաղաց աչքեր և ջրաղացպանի սենյակից: Շենքն ամբողջությամբ ծածկված է հարթ գերանածածկով: Ծածկը կրել են փայտե սյուները, որոնք բարձրացել են քարից խարիսխների վրա: Խոյակները որոշակի մշակման են ենթարկվել՝ զգալի գեղարվեստականություն հաղորդելով ներքին տարածության կոլորիտին: Շենքը կառուցված է տուֆ քարով: Ունի բնակելի և տնտեսական կառույցների բարձրությանը մոտեցող բարձրություն: Պատի առաջին շարքերը շարված են համեմատաբար խոշոր քարերով, որից հետո շարքերի քարերը ավելի փոքրանում են: Բացվածքները փոքր են, որոնք ապահովում են ինչպես լուսավորությունը, այնպես էլ օդափոխությունը: Շենքն ունի մեկ մուտք : Ջրաղացի շենքի տանիքը հետագայում կառուցվել է երկլանջ: Տանիքի ծածկը իրականացվել է կղմինդրով:

Թեփահանիչ շենքը կառուցված է տեղական տուֆ քարով՝ կանոնավոր կոպտատաշ եղանակով: Քարի շարի չափերը շենքի ողջ բարձրությամբ գրեթե չեն փոփոխվում: Ծածկը իրականացվել է փայտով, որի հիմքը նստում է տուֆե արտաքին պատերի վրա: Մուտքի բացվածքում ծածկի փայտե հեծանի թռիչքը կրճատելու նպատակով դռան բացվածքի ձախ կողմում տեղադրվել է փայտե սյուն, որը ծածկի բեռնվածքը փոխանցում է բացվածքի ստորին տուֆե պատին: Ջուրը բնական աղբյուրից դեպի շենք հասցվել է փայտե խողովակներով, որը հոսելով շենքի ստորին մասով պտտում է փեռերով մետաղական անիվը, որը նախկինում եղել է փայտից: Անիվը մետաղական ձողով կապված է թեփահանող քարի հետ, որը պտտվում է ջրի հոսքի ազդեցությամբ :

Տեղադրված է գեղատեսիլ վայրում՝ Քասախ գետի ափին:

Շիրակի մարզի Անիի շրջանի Հայկաձոր գյուղի ջրաղացը կառուցվել է դեռևս 1900թ. Ալեքսանդրապոլի մեծահարուստ Արշակ աղայի միջոցներով և աշխատել է մինչև 1963 թվականը: Հայ-թուրքական հարաբերությունների հետ կապված՝ սահմանամերձ տարածքում գտնվող ջրաղացի գործարկումը ձգձգվել է: Ախուրյան գետի վրա կառուցված ջրաղացը խորհրդային ժամանակաշրջանում սպասարկել էր գյուղի, ինչպես նաև հարակից գյուղերի բնակիչներին:



ԼՂՀ «Հունոտի կիրճ» պետական բնապատմական արգելոցի տարածքում պահպանվել են մեկ տասնյակից ավելի ջրաղացների ավերակներ, որոնք վկայում են Հունոտ երբեմնի բարգավաճ բնակավայրի մասին: Ջրաղացները տարածվում են Ջար գետի երկայնքով: Մինչև 20 –րդ դարի սկիզբը բնակավայրը կարևոր դեր է խաղացել Շուշի քաղաքի և շրջակա բնակավայրերի բնակչությանը ալյուր մատակարարելու համար:

Ստեփան ՊԱՊԻԿՅԱՆ
Հայկական էներգետիկական ակադեմիայի հիմնադիր նախագահ, տեխնիկական գիտությունների թեկնածու

39 հայ վինվորների նշանավորումը աշխարհում

Հայերենին նվիրված հուշակոթողներն ամենուր են, աշխարհի բոլոր ծագերում, որտեղ դիպել է հայի ոտքը:

Սան Պաուլոյի սրտում (Բրազիլիա), Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու բակում, վեր է խոյանում հայոց այբուբենին նվիրված, հայկական համայնքի նախաձեռնությամբ կառուցված հուշարձանը:

ԱՄՆ-ի Օհայո նահանգի Քլիվլենդ քաղաքում փոքրիկ այգի կա, որ կոչվում է «Հայկական արվեստի այգի»: 2010 թ.-ին այնտեղ կանգնեցվեց հայոց այբուբենին նվիրված ևս մեկ հուշակոթող, որի մի կողմում փորագրված են հայերեն տառերը, մյուս կողմում՝ հայ անվանի արվեստի գործիչների անունները:

Ալթայի տարածաշրջանի 70-ամյակի առիթով հայերը Բառնաուլ քաղաքին նվիրեցին հայ-ռուսական բարեկամությունը խորհրդանշող հուշարձան: Այն իրենից ներկայացնում է բացված գիրք, որի մի էջին հայոց, մյուսին՝ ռուսերենի այբուբենն է, իսկ ներքևում ոսկե բանալի:

Նմանատիպ մի նվեր էլ իբրև բարեկամության և հանդուրժողականության խորհրդանիշ, Նովոկուզնեցկ քաղաքին արեց «Союз армян Кузбасса» ֆոնդի ներկայացուցիչ Սարիկ Աբրահամյանը:

ԱՄՆ-ի Պրովիդենս քաղաքում՝ «Հայոց ժառանգության այգում» տեղադրված է հայոց այբուբենը պատկերող հուշարձան: Այն նվիրված է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին, որը զարդարում է «Քանի դեռ հնչում է հայերեն խոսքը և գոյություն ունի հայ գրականությունը, Հայաստանը կապրի» գրությունը: Կիպրոսի Մելքոնյան վարժարանը (Melkonian Educational Institute, MEI) կառուցվել է 1926 թ.-ին Գրիգոր և Կարապետ Մելքոնյանների կողմից: Վարժարանի բակում տեղադրված է Հայոց այբուբենին նվիրված հուշարձան:

Մեսրոպյան այբուբենին նվիրված ամենահայտնի կոթողներից մեկն էլ կանգնեցված է Երևանի Մատենադարանի բակում: Իր աշակերտ Կորյունին Մաշտոցը ծանոթացնում է հայերենի տառերին: Արձանի հեղինակը Ղուկաս Չուբարյանն է:

Արագած լեռան արևելյան լանջին 2005 թ.-ին կառուցված «Տառերի պուրակը» նվիրված է հայոց գրերի ստեղծման 1600-ամյակին: Հուշարձանը ներառում է հայոց այբուբենի 39 տառերի զարդաքանդակները և հայ մեծերի հուշարձանները:

Մայրենի լեզվին նվիրված ամենամեծ հուշակոթողը մեր ներսինն է, այն կանգնուն պահելու պարտականությունը՝ բոլորինս:

Տաթևիկ ՍԱՐԳՍՅԱՆ

Միհրան ԼԱՏԻՖՅԱՆ.

Ռիո դե Ժանեյրոյի հայ ճարտարապետը

Միհրան Լատիֆյանը Ռիո դե Ժանեյրոյի ճարտարապետության և ներկայիս քաղաքաշինական տեսքի գլխավոր պատասխանատուներից է: Միհրան Լատիֆյանը, որն առավել հայտնի է Միհրան Լատիֆ անվամբ, Բրազիլիայում հաստատվել է 1879 թ.-ին: Լաթիֆյանն առաջին հայերից է, որ ոտք է դրել բրազիլական հողին: Ճարտարապետը ծնվել է 1856 թ.-ին Կոստանդնուպոլսում (այժմ՝ Ստամբուլ) հայ ճարտարապետների ընտանիքում: Կրթությունը ստացել է Բելգիայում՝ Կանտի համալսարանում, այնուհետ տեղափոխվել Բրազիլիա: 1897 թ.-ին Ռիո դե Ժանեյրոյի քաղաքային իշխանությունները հայտարարություն տարածեցին՝ Ռիոն միասնական քաղաքային համալիր դարձնելու մասին: Ռիո քաղաքի ճարտարապետության ամբողջական, միասնական նախագիծ ստեղծելու մրցույթ հայտարարվեց: Ճարտարապետ Լատիֆի նախագիծը հաղթող ճանաչվեց: Հենց ինքն էլ գլխավորեց իր մտահղացման իրականացման աշխատանքները: Լատիֆի նախագծի համաձայն ապագա Ռիոն իրենից ներկայացնում էր տարածք օղակաձև շրջապատված բեռնատար մեքենաների համար նախատեսված մայրուղիներով: Բլուրների վրա տեղակայված մասերն իրար էին կապվում կամուրջների ու բազմահարկ էստակադաների միջոցով, որոնք միավորվում էին թունելների և գետնանցումների հետ: Ընդամենը 1 տարվա ընթացքում կառուցվեց 70 մետր լայնությամբ Պեյր Մար մայրուղին: Սրանով Լատիֆյանը Բրազիլիայում հիմնեց ժամանակակից քաղաքաշինության դասական օրինակը՝ հաշվի առնելով բոլոր յուրահատկությունները, այդ թվում ազգային:

Ղրիմում գտնվել են «Արմենիա» ջերմանավի հետքերը

Ռուսաստանի Դաշնության ստորջրային աշխատանքների գլխավոր վարչությունը վաղուց զբաղվում է «Արմենիա» սանիտարական ջերմանավի հավանական խորտակման տեղում: «Արմենիայի» որոնման հետազոտությունները շարունակվում է մինչև օրս և ծովի լուրջ խորություններում արդեն հայտնաբերվել են նավի բեկորներ: Այս մասին Ղրիմյան «Նոր օր» թերթին տեղեկացրել է «Ստորջրյա հետազոտությունների Սևծովյան պետական կառույցի» տնօրենի տեղակալ Վիկտոր Վախնենը:

«Արմենիան», որ կառուցվել է Բալթիական գործարանում, ուներ 108 մետր երկարություն, ջրատարողությունը՝ 5770 տոննա: Սպասարկող անձնակազմը բաղկացած էր 96 մարդուց: Ջերմանավը միաժամանակ կարող էր վերցնել 950 ուղևոր: «Արմենիան» նախատեսված է Ղրիմ-Կովկաս նավահանգիստների միջև փոխադրումների համար:

Մեծ հայրենականի սկզբին «Արմենիան» «զորակոչվեց» զինվորական ծառայության և վերածվեց լողացող հոսպիտալի: Այն նախատեսված էր 400 վիրավորի համար:

«Արմենիան» սանիտարական նավ դառնալուց 5 օր առաջ թշնամին ընդհուպ մոտեցել էր Օդեսային: Նավը հարկադրված եղավ պաշարված քաղաքից էվակուացներ ոչ միայն վիրավորների, այլև փախստական քաղաքացիների:

1941 թվականի նոյեմբերի 4-ին «Արմենիան» դուրս եկավ Տուապսեից և ուղղություն վերցրեց դեպի Սևաստոպոլ: Այնտեղից «Արմենիան» դուրս եկավ նոյեմբերի 6-ին, ժամը 17.00-ին, իսկ Յալթա հասավ նոյեմբերի 7-ին, ժամը 2.00-ին: Այստեղ սպասում էին հազարավոր փախստականներ: Այդ օրը քանի մարդ հայտնվեց «Արմենիա» նավում, դժվար է ասել: Ամենահամեստ հաշվարկներով՝ 3000 մարդ: Ըստ այլ տվյալների՝ 8.000:

Նոյեմբերի 7-ի առավոտյան ժամը 8-ին «Արմենիան» ելավ բաց ծով:

Պաշտպանության համար «Արմենիային» ուղեկցում էին երկու պահակային ռազմանավ, իսկ օդում՝ խորհրդային երկու կործանիչ: «Արմենիայի» վրա ճակատագրական գրոհի տեղեկությունները հակասական են: Երկար ժամանակ իշխում էր այն կարծիքը, որ ջերմանավը զոհ է դարձել մի քանի տասնյակ գերմանական ռմբակոծիչների զոհ:

Այսօր, սակայն, առավել հավաստի է թվում այն վարկածը, որ գերմանական ինքնաթիռը եղել է մեկը՝ տորբեդահար He-111-ը:

Սա չի եղել նպատակադրված գրոհ «Արմենիայի» վրա: Տորբեդակիրը օդից փնտրում էր որևէ «Ղրիմ-Կովկաս» ուղերթի խորհրդային տրանսպորտային որևէ միջոց՝ գրոհելու ու խորտակելու:

He-111-ը «Արմենիայի» վրա նետեց 2 տորբետ, մեկը անցավ նավի կողքով, իսկ մյուսը՝ 11 անց 25 րոպեին կպավ նավի քթամասին: «Արմենիան» խորտակվեց, ընդամենը 4 րոպեում: Նավի վրա եղած հազարավորներից փրկվեց ընդամենը 8 մարդ:

ՆԿԱՐՈՒՄ. «Արմենիա» ջերմանավը և եկեղեցին, որը կառուցվել է ջերմանավի զոհերի հիշատակին (Յալթա):

Հուշատախտակ քաղաքապետարանի առաջ

Լոս Անջելեսի քաղաքապետարանի խորհրդի անդամ Պոլ Գրիգորանը վերջերս պաշտոնական արարողությամբ բացումն է կատարել քաղաքապետարանի այգում տնկված նռան ծառի վրա զետեղված հուշատախտակի, որը նվիրված է Հայոց ցեղասպանության հարյուրամյա տարելիցին:

2015 թվի ապրիլին Գրիգորյանը առաջին նռան ծառն էր տնկել այդ վայրում՝ հայտարարելով քաղաքի 15 շրջաններում 100 ծառ տնկելու ծրագրի սկիզբը:

Հուշատախտակին գրված է. «Լոս Անջելես քաղաքը նշում է Հայոց ցեղասպանության հարյուրամյա տարելիցը (1915-2015 թթ.): Այս ծառը տնկել էին քաղաքապետ Էրիկ Գարսետտին և քաղխորհրդի անդամ Պոլ Գրիգորյանը՝ հարյուրամյա տարելիցի հիշատակման առթիվ»:

«Նուռը հույսի, վերածննդի և գոյատևման խորհրդանիշն է: Քաղաքն այցելող ամեն ոք կարդալու է այս հուշատախտակի բառերը և ծանաչելու է հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը»,- նշել է Գրիգորյանը իր խոսքում: Բացմանը մասնակցել է նաև այգիների վերականգնման բաժնի գործադիր տնօրեն էնթոնի-Պոլ Դիազը:

Հ. Ծ.

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝
Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ,
հեռ. 56-80-14: Դասիչ՝ 69268,
գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝
19.04.2017 թ.
Տպաքանակը՝ 500: gitutyun@sci.am

"ГИТУТЮН" ("Наука") газета НАН РА